26 սեպտեմբերի 2019 թվականի N 1300 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 1765-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1765-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) որոշման 1-ին կետում՝

ա. «656.6» թիվը փոխարինել «662.58» թվով,

բ. «ջրային հողերի՝ 117.1 հեկտար» բառերից հետո լրացնել «էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի՝ 5.98 հեկտար» բառերը.

2) որոշման 2-րդ կետում՝

ա. «ա» ենթակետում «656.6» թիվը փոխարինել «662.58» թվով,

բ. «բ» ենթակետում «18.20» թիվը փոխարինել «12.24» թվով.

3) որոշման N 2-րդ հավելվածում՝

ա. «էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	5.98		6.24

»,

բ. «Ընդամենը» տողում «656.62» թիվը փոխարինել «662.58» թվով, իսկ «18.2» թիվը՝ «12.24» թվով.

4) որոշման N 4-րդ հավելվածում՝

ա. հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«

2			4.39						երկաթգծի տարածք
282			0.9						երկաթգծի տարածք
283			0.14						երկաթգծի տարածք
284			0.07						երկաթգծի տարածք
28			0.24						երկաթգծի տարածք
401			0.24						երկաթգծի տարածք

»,

բ. «Ընդամենը» տողի IV-րդ սյունակը լրացնել «5.98» թվով.

5) որոշման N 5-րդ հավելվածում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 2, 282, 283, 284, 288 և 401 պարբերությունները,

բ. «Ընդամենը» տողում «12.22» թիվը փոխարինել «6.24» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 3
Երևան